

Տեղեկանք

«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի մասնագիտական փորձառության մասին սոցիալական պաշտպանության ոլորտում

«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ն իրավապաշտպան գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունն է, որի առաքելությունն է կանանց և աղջիկների տարբեր խբերի գորեղացումն ու աջակցումը, կանանց նկատմամբ խտրականության և բռնության մշակութային և համակարգային դրսևորումների վերհանումն ու նվազեցումը:

Կազմակերպությունը հանդիսանում է «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի հիմնադիր անդամներից և 2010թ.-ից ջատագովում է ընտանեկան բռնության մասին օրենքի ընդունման համար¹:

2018թ.-ից կազմակերպությունը հանդիսանում է Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի անդամ, 2019թ.-ից՝ Փոխվարչապետին կից Կանանց խորհրդի անդամ:

Իր գործունեության ընթացքում կազմակերպությունն ակտիվորեն համագործակցել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ, մասնավորապես՝ 2016թ. նախարարության հետ համատեղ մշակել է ընտանեկան բռնության ենթարկված անձանց ուղղորդման մեխանիզմները, 2018-2019թթ. ներկայացրել իր փորձագիտական եզրակացությունը 2019-2023թթ. գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարության և միջոցառումների ծրագրի մասին:

Կազմակերպությունը պարբերաբար կազմակերպում է դասընթացներ սոցիալական աշխատողների համար, այդ թվում՝ պետական հաստատություններում

¹ Կազմակերպության գործունեության մասին առավել մանրամասն տեղեկատվություն, հնարավոր է գտնել՝ <https://womenofarmenia.org/?lang=hy>
<https://www.facebook.com/WomenResourceCenter>

ծառայություններ մատուցող մասնագետների համար, գենդերազգայունության, կանանց տարբեր խմբերի հետ աշխատանքի առանձնահատկությունների մասին:

Արցախյան երկրորդ պատերազմի ժամանակ կազմակերպությունն նախարարության ուղղորդմամբ շուրջ 9 ամիս աջակցություն է տրամադրել նախարարության վերահսկողության տակ գտնվող 4 կազմարանների, այդ թվում՝ Երևանում՝ Մասիվում, Ավանում, Քանաքեռում և Կոտայքում՝ Աբովյան քաղաքում: Պատերազմի արդյունքում տեղահանված արցախցի շուրջ 100 ընտանիքներ 9 ամիսների ընթացքում կազմակերպության աջակցությամբ ստացել են տաք հագուստ, հիգիենայի միջոցներ, հոգեբանական աջակցություն, կանայք ստացել են նաև գինեկոլոգիական ծառայություններ, այդ թվում՝ անվճար հետազոտություն և բուժում:

«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ նախագահ

Լարա Ահարոնեան

